

Աւմատիրի չեմբեղախօս հայերի անցեալի մասին — հայրենիք եւ զաղբը:

Դ.

Մ. Կաղանկատուացին «Աղուանից պատմութեան» Ա. գրքի 14 և 19 գլուխներում մի քանի անգամ յիշում է Հակոբ գիւղը: Մեզ համար կարևոր է միանգամայն թէ անունը և թէ գիւղի պատմութիւնը, որը հետեւեալն է: Ս. Գր. Լուսաւորչի թողը՝ Մանուկն Գրիգորիս մի եկեղեցի էր կառուցել Աղուանից Յոի բերդաքաղաքում, ամփոփելով այնտեղ Յովհաննէս Մկրտչի հօր՝ Զաքարիայի և երանելի Պանդալեոնի նշխարներից մի մի մասն, ուր և նշանակուած էր մի երէց «սպասակալ և պաշտօնեայ վկայիցն Քրիստոսի»: Շուտով այդ երէցի մօտ գալով ճիղը ցեղից մի պատանի, քրիստոնէութիւն ընդունեց և աշակերտեց նրան: Քանի որ Մանուկն Գրիգորիս կենդանի էր, Յոի բերդաքաղաքի քրիստոնէութիւնն էլ հաստատ էր, բայց երբ նա նահատակուեց լեռնականների ձեռքով, Պարսիկները մոզական կրօնը վերականգնելով՝ Յոիի եկեղեցին աւերեցին, իսկ երէցին և ճիղը աշակերտին նահատակեցին: Թէ ինչ դիրք բռնեցին Յոիի բնակիչները դէպի այդ եղելութիւնը՝ աւանդութիւնը լռում է այդ մասին. երևի նրանք ընդունել էին մոզութիւնը, որովհետեւ, երէցի և նրա աշակերտի դիակների թաղման հոգսը քաշում են «Ասորեայք»: Նահատակների նշխարները «առեալ ասորեայց ոմանց արեղայից, տանէին ի Հակոբ անուանեալ գիւղն և անդ եղեալ ի գերեզմանի և ինքեանք ի տեղւոջն վանս շինէին և անդ է, ասեն՝ նշխարք երանելեացն մինչև ցայսօր»: Իսկ Յոիում մոզական կրօնը զօրանալով՝ ոչ ոք հետամուտ չեղաւ Զաքարիայի և Պանդալեոնի նըշխարները գտնելու, մինչև Վաչագան թագաւորի ժամանակ, երբ Հակոբ աւանի վանահօր՝ Յակոբի երազի ցուցումով եկեղեցու աւերակների մէջ գտնուեցին նրանք:

Այս աւանդութեան մէջ պատմական հիմք կարող է նկատուել այն, որ Յոիում նահատակուած երէցի և նրա ճիղը աշակերտի դիակները ամփոփուի են հանդիսանում «ասորեայք ոմանք արեղայք»: Փաւստոս, Զենօր Գլակ և Խորենացին յիշում են, որ Ս. Գր. Լուսաւորչի իր գործունէութիւնը ասորի օգնականներով էր կատարում, և թէպէտ նա ինքը կեսարական՝ ուրեմն յունական

ազգեցութեան զարգ տուեց, բայց՝ բացի հին պատմիչներից, նաև նորագոյն ուսումնասիրութիւններով հաստատուում է, որ քրիստոնէութեան սաղմը ձգուել և աճել է Հայաստանում հարաւի օգնութեամբ՝ ասորական եկեղեցու և վանքերի շնորհիւ: Գալով աւանդութեան ծագման հարցին, թւում է թէ այն ոսկրապաշտական և պատկերայարգութեան յետին շրջանի կնիքն ունի և նոյն իսկ անթուակալական իշխանապետութեան ոյժ տալու մի տենդենց կարելի է նկատել պատմիչի շարադրութեան այդ գլուխների շրջանում, ուր Ամուրասը և առհասարակ Աղուանից երկրի սրբավայրերը սկզբնական և հեղինակաւոր յանձնարարուելով՝ ընթերցողի աչքում նրանց հեղինակութիւնը կարող էր բարձրանալ միջին դարերում: Բայց աւանդութեան պատմական հնութիւնը և ծագման պարագաներն ինչպէս և ընդունուին այսօր, այնուամենայնիւ չի նսեմանում այն երկու տեղեկութեան ոյժը, որը Հակու աւանին է վերաբերում. նախ՝ տեսնում ենք, որ աւանդութեան հեղինակը՝ որ դարում էլ նա ապրելիս լինէր—այդ անտարբեր է, Հակու գիւղին յարմար է նկատել քրիստոնէութեան մուկոնաց պաշտպանութիւնը. նա զուրգուրել է իր մէջ քրիստոնէութեան գործիչներին այն ժամանակ, երբ պարսկները Յոի գիւղաքաղաքում մոզական կրօնը վերականգնելով աւերեցին եկեղեցին և նահատակեցին պաշտօնեաներին: Երկրորդ՝ Աղուանից պատմիչը յիշում է Հակու աւանի գոյութիւնը ժամանակագրօրէն. «Եւ անդ է, աւե՛ն՝ նշխարք երանելիացն մինչև այսօր», գրում է Կաղանկատուացին, որ քաջ ծանօթ լինելով իր հայրենիքին՝ Աղուանքին, այդպիսով ընդունում է Հակու աւանի շէն լինելը իր դարում, թէպէտև «ասեն» միջանկեալը վկայում է, որ նա չի եղել այդ աւանում:

Այս է ահա Հակու գիւղի առաջին սուղ յիշատակութիւնը: Այն հարցը, թէ Յոին և Հակուն Աղուանքի որ մասունքն էին գտնուում—պատմիչի խօսքերով չի որոշուում: Աղուանից թագաւորութեան սահմանը Լոռիից ընդարձակում էր դէպի արևելք անորոշ գծով. բացի այդ Աղուանքի մէջ են յիշուած զանազան պատմիչների համաձայն Սեանայ լճից դէպի հարաւ արևելք և հիւսիս արևելք տարածուող Արցախը, Սիւնիքը և Ուտեաց աշխարհը իր անդրկուրեան գաւառներով: Մարքարտի որոշմամբ Առան կոչուած երկիրը հին Աղուանքն է մինչև Դերբենդի դուռը, իսկ նեղ մտքով Առան տեսելով հասկացւում էր «Կուրի և Երասխի մէջ տեղ գտնուած երկիրը (Երանշ. 119, Հանդ. Ամս. 1905, էջ 61): Արդ՝ Յոին և Հակուն այդ ընդարձակ շրջանի որ մասունքն էին և Ամարասից դէպի որ կողմը—պատմիչի տեղեկութիւններն այդ մասին ոչ մի ցուցումն չունին: Այդ հարցը պարզուում է մի ուրիշ պատ-

միջի ցուցումներով, որոնց կանցնենք հետեւեալ զլխում. այստեղ միայն կը նկատենք, որ Յոի անունը կարող է խառնակուած լինել հեշտութեամբ ձեռագրական գրչութեան շնորհիւ. նորագոյն հետազոտողներին՝ Հ. Ղ. Վ. Խնճիճեանին և Հիւրշմանին յայտնի չէ այդ անունը. ոչ էլ յիշում է այն Սիւնեաց պատմիչը՝ Ստ. Օրբէլեան և Սուտ-Սորենացու աշխարհագրութիւնը: Սիւնիքում յիշում է Տրի կամ Տոի անունով աւանը, որը բացի միւսներից ծանօթ է նաև Յոի աւանը յիշող Կաղանկատուացուն: Թէ այդ երկու անունները միևնոյն անունն են ալնարկում և նրանց նախաձայների տարբերութիւնը գրչութեան սխալ է լոկ՝ այդ մնում է ստուգել ձեռագրերից:

Ե.

Գրաւոր յիշատակարանի մէջ Հակու անուն գոյութիւնը և Արմաւիրի Հաբուճ Հաբլցոց աւանդական ծագումը ինքնըստինքեան մէկգմէկու հետ չեն կարող շաղկապուել, որովհետև անունների կրկնողարար տարբեր տեղերում երևան գալը տարբեր պատճառներ կարող է ունենալ: Օր. Հին Հրէաստանի, Յունաստանի, Աֆրիկայի և Բարելոնի քաղաքակրթութիւնները և այսօրուայ Կովկասեան լեռները շատ աշխարհագրական անուններ ունեն, որոնք կամ վերջաւորութեամբ նոյն են և կամ աննշան հնչիւնափոխութեամբ միայն տարբերում են իրարից. սակայն այդ համագամանքը լեռնականների ծագման և քաղաքակրթութեան հարցերի վերաբերեալ որևէ եզրակացութեան հիմքում դրուել չի կարող: Ա-րք В. В. Пфафс-ի այդ ուղղութեամբ ուսումնասիրութիւնների սխալ լինելը ապացուցուած է լեզուագիտական և ազգագրական ուսումնասիրութիւններով և պարզուած է, որ էականը մի ժողովրդի ծագման և պատմութեան համար՝ կենցաղական, կրօնական և իրաւունքի սովորութեան ուսումնասիրութիւնների ընդհանուր եզրակացութիւնն է, որի վերջում միայն իբրև աւելորդ ապացոյց՝ յատուկ անունների համեմատութիւնը կարող է որոշ իմաստ ստանալ: Այդպէս է նաև Արմաւիրցոց հարցում, որոնց ազգութիւնը, սակայն, կուսական անյայտութիւն է ներկայացնում, ուրեմն և անհնարին է ստուգել յատուկ անունների զուգադիպութիւնը:

Սակայն այդ այդպէս լինելով հանդերձ, մի կարևոր պայման դոյութիւն ունի, որը զանց առնել անկարելի է. մինչդեռ օտերը ազգագրական որևէ պարագայով առնչութիւն չունին ոչ Բարելոնի, ոչ Յունաստանի և ոչ էլ Հրէաստանի հետ, և այդ պատճառով յատուկ անունների զուգադիպութիւնը անմիտ և կոյր է հանդիսանում, ընդհակառակն՝ Արմաւիրի շերքիզախօս հայերի

նչ միայն այսօրուայ սերնդի աւագագոյն անդամները հայերէն գիտէին, այլ և նոքա հայ անունը և լուսաւորչեան հաւատն իրենց վրայ պահել են հաստատամտութեամբ և բացի այդ՝ երկրագործական կեանքի հետքերը մնում են նրանց ժողովրդական նիւթերի մէջ, Այնպէս որ՝ երբ նոքա մի ինչ որէ Հաքում աւանդաբար համարում են իբրև իրենց նախնական բնակավայրի անունը, ինքնըստինքեան հետաքրքրութիւնը կենդրոնանում է այդ ղէպքում հայկական մասսայի բուն հայրենիքում եղած Հակու աւանի շուրջը. մի շարք տեղագրական և ազգագրական պայմաններ, միջնադարեան յիշատակարանների գրաւոր ցուցումների հետ շաղկապուած, պարզում են Հակուի տեղը, որոշում են նրա արդի հետքերը նախնական Հակուի շրջակայքում, և Արմաւիրցոց ու նրանց թաղերի ազգագրական նիւթերի գէթ այնքանը, որ մեզ է յայտնի, շաղկապում է Հակուի և նրա շրջակայքի արդի տեղագրական և ազգագրական նիւթերի հետ։ Այս բոլորով յատուկ անունների կրկնաբար երևան գալը Արմաւիրում և Կովկասում միանգամից՝ հանդիսանում է միևնոյն հայկական կեանքի շարունակութեան հնապատմական հետքը և կորչում է յատուկ անունների կոյր և անմիտ զուգադիպութիւն լինելու կասկածը։

Որոնք են ակնարկուած տեղագրական և ազգագրական պայմանները։

Այսօրուայ Զանգեզուր զաւառի ոստիկանական շրջանում մի գետակ է հոսում՝ Հաքեարու, որը սկիզբն է առնում Արցախի և Սիւնիքի կամ այսօրուայ բաժանումներով՝ Զուանշիրի և Զանգեզուրի սահմանագծում հորիզոնական ուղղութեամբ ձգուող լեռնաշղթայի գագաթներից, և հոսելով ղէպի հարաւ արևելք՝ թափում է Արաքսի մէջ։ Հայոց յիշատակարանները Հաքեարու կոչում են Աղաւնոյ կամ Աղունոյ գետ, իսկ նրա վերին հովիտը՝ Աղահէճ գաւառ, որը այժմ կոչւում է սակաւ գործածական Մաղաւուզ բառով (Ազգ. Հանգ. Դ. 1—116)։ Ռուսաց քարտէզների վրայ այդ գետի անունը նշանակուած է Акеръ (5 վերստ և Акяри (1882 թ.) ձևերով, բայց տեղական բնակիչները սովորաբար ասում են Հաքեարու. մեզ հանդիպել է նաև Հաքարու կամ Հեաքեարու։ Ալիշանը և Ե. Լալայեանը նշանակում են я, եա և ա հնչիւնների փոխարէն պարզ ա ձայնը՝ Հագարու և Հաքարու ձևերով, բայց երկուքն էլ չեն համաձայնում իրականութեան։

Փետի հին անունը Աղաւնոյ և Աղունոյ չեն բացատրուած, բայց յիշեցնում են՝ միայն մի անգամ հանդիպող հայոց նախաբարներին ցանկի 161-րդ անունը՝ Աղնեւունիք, որը իշխանական գահոյքից զուրկ, աննշան մի տոհմ էր (Սովիերք Հայկ. Զ. 38), թէ ինչու այսօրուայ անունը վերջանում է ու ձայնով՝ յայտնի

չէ. ժողովողը տեղական գործածութեամբ այդ վերջաւորութիւնը միշտ պահպանել է՝ գրելով. «Ձանգեզուրի ամենանշաւոր գետը Հաքարու գետն է. . . Վերակոչուած է Ձարուխ գետ և այստեղ թափուած է Հաքարուի մէջ: Հաքարու գետը հոսելով շարունակ դէպի արեւելահիւսիս (կարդա՛ արեւելահարաւ¹): Հաքարուի, ինչպէս և Բարկուշատի²) մէջ պատահում են բաւական մեծ օրագուններ (ս. էջ 22): Ոչ թէ բացատրելու, այլ ծանօթանալու համար կը յիշենք, որ «ու» վերջաւորութիւն ունեցող գիւղի անունները Հին Հայաստանի աշխարհագրութեան Սիւնիք նահանգում են յիշուած.— Գորու (Հաքանդ գ.), Աչաղու (Բաղք գ.), Ծղու, Կոճարու (Քաշունիքում), Մալուենու, Մանաղու (Արևիքում), Ծաղթանու, Բոկախու (Ձորք գ.), Ուղու (Երնջակում), Գերափու (Գեղաքունի գ.), Հաւու, Երիժու (Վայոց Ձորում) և Խրու (Աղահէճքում): Սրանցից Գորու մինչև այսօր կայ և գտնոււմ է Հեաքեարուի միջին հովտում, Գորխից դէպի արեւելահարաւ Այդ շարքից բացառութիւն է կազմում Այրարատի երկու գիւղերի անունը Ողմաու և Որդօրու³):

Որովհետեւ ու վերջացող գիւղի անունները շատ սակաւ, գրեթէ միմիակ անգամ են յիշուած, ուստի անհնար է լուծել թէ նրա ծագումը և թէ գերը: Այդպէս նաև Հեաքեարու անունն մէջ է, որի վերջաձայնը կարող է կամ արմատական լինել, կամ ածանց և կամ որևէ կերպարանափոխութիւն: Հատու ազդու, քնարերգու, հուժգու (հուժկու) բառերը մի կողմից, միւս կողմից արարի արու բառերն ու սրանց երկար շարքը ենթադրութիւնների աղբիւր են միայն (Հանդէս Հայագիտութեան, Ա. 59 և հետև): Հեաքեարու անունը բաղկացեալ մասերից է կազմուած— Հեաք-եար-ու ձևով: Կրկնաբարդուած կամ կրկնածանցուած է՝ նման Բաղ-ան-ոտ, Բաղ ու-ան և այլն անուններին: Եար միջածանցը նախնեաց եար յոգնակի վերջաւորութիւնն է, նման Ծուաղ գաւառի Բակ (գիւղ), Բակեար (ամրոց) և Բակեր (այլ գիւղ) անունների, որոնք հայերէնով է մեկնում Հիւրշման. (Հանդ. Ամս. 1906, 22^բ): Եար

1) Հեղինակի այդ սխալը միակը չէ (Ազգ. Հանդ. Գիրք Դ, 4 — 147), ուղղելի է մանաւանդ էջ 56 Առանձորի դիրքը. որ Խնձորեսկից դէպի արեւելահիւսիս է եւ ո՛չ Ալ արեւելահարու:

2) Ռուսոյ 1882 թ. քարտէզը նշանակում է Бергушатъ. խառնակելով ինչպէս բազմիցս, Նոյնպէս եւ այս անգամ Շատ պարթեական լեզուով նշանակում է ուրախութիւն.— Արտաշատ, Աշտիշատ, Երուանդաշատ եւ այլն:

3) Հիւրշման չի յիշում ո՛չ առանձին եւ ո՛չ տու վերջածոյնի տակ ու վերջացող անունները. Ուրարդու՝ Նոյնպէս (Հանդ. Ամս. 1906, 86^բ):

յոգնականացուցիչը Արցախի, Սիւնիքի և Աղուանքի անունների մէջ սովորաբար դարձել է ար և եր, որ աշխարհաբարի յոգնակին է—Հաթ-եր-ք (հմմտ. տղերք, աղջկերք, քւերք և այլն), Կալեր, Պտեր, Փաղար, Ալեար (հնչւում է Ալիար), և այլն. վերջին երկուսը նուխտյ գաւառում: Գալով արմատին՝ Հեաք, (որ յոգնականացուցիչի ազդմամբ կազմուած է Հաք սկզբնականից), Հակ, Ակ ձևերը դժուար է մեկնել. այդպիսի տեղւոյ կամ ցեղի անունը ուրիշ տեղ չի հանդիպում, թէպէտև մի Հակեար ձև կարող է քիչ անգամ յիշուած Ակեայք նախարարութեան յիշատակը լինել, որի արմատն է Ակ, կամ այլ անգամ Ակէացի ձևի մէջ է միջածանցի ներկայութեամբ դատելով՝ Ակու կամ Ակի: Անհնար չէ այդպիսի կերպաւորումը յառուկ անուան ոչ միայն իր բազմաթիւ անալոզ գիւնները տեսնելով, որոնք դանց ենք աւնում յիշել, այլ և նրա համար որ Հաքեարուի հովտում՝ Աղահէճք գաւառի մէջ, որ արդի Մաղաւուզն է, արգարև՝ գոյութիւն է ունեցել 13-րդ դարում Հակ անունով մի գիւղ՝ յիշուած Սիւնեաց պատմութեան ՀԴ գլխում եկեղեցական հարկատու գիւղերի ցանկի մէջ, ըստ որում Զ. գաւառի՝ Աղահէճքի 43 գիւղերի շարքում 25-րդը Հակ գիւղն է, որից եկեղեցին ստանում էր 15 չափ տուրք կամ հարկ (Պատմ. տանն Սիսական՝ Ստեփ. Օրբելեան, Տփխիս, էջ 516^բ): Կազանկատուացու յիշած Հակու և Սիւնեաց պատմիչի յիշած Հակ անունների տարբերութեան անալոզիան ունինք Բագ-Բագին-Բագուան-Աթլի-բագուան, որը այսօրւայ Բագու կամ Բաքի քաղաքի անունն է (Հանդ. Ամս. 1906, 222 և Ինճիճ. Ստոր. Մեծ Հայք. 326): Տարբերութիւնն այն է, որ Բագ բառը նշանակութիւն ունի, իսկ Հակ անուան իմաստը մեզ յայտնի չէ. ինչ վերաբերում է Բագուան և Հաքեարու, Հակու վերջաւորութիւններին, նրանց տարբերութիւնը սովորական երևոյթ էր հնում—Քաշունիք—Քաշաթաղք, Երուանդաշատ—Երուանդաքար, Նպատ—Նպատական, Գորու—Գարիս—Գեօրան, Բաղանոտ—Ռոտիբաղ և այլն:

Հակու և Հակ անունների և գիւղերի իբրև մնացորդը հանդիսանում է այսօր Աղահէճք-Մաղաւուզ գաւառում ԱԼԱԿՐԻ գիւղը, որ գտնւում է Հաքեարուի և նրա Ալագչի վտակի խառնարանի եռանկիւնու խորքում. թուի թէ ԱԼԱԿՐԻ անունը եղծուած է բուն АКАРЛИ ձևից. ЛИ կամ ЛУ վերջանդամը Սիւնիքի և Աղուանքի արդի թաթարական և պարսկական գիւղերից բացի տրուած են նաև հայաբնակ գիւղերին. Հայսելու, Զինլի, Արաբլու օտարաբնակ գիւղերի շարքում 5 վերստեան բարտէզը նշանակում է Մազրղու, Զորլու, Հաւարլու հայաբնակ գիւղերը, որոնցից վերջինը բնաւ չունի լու վերջաւորութիւնը, այլ ասւում է իբր Հաւարիկ:

Թէ ԱКЯРЛИ գիւղի և թէ Հաքեարու գետի Աղահէճքում գտնուիր, ուր նշանակուած է նաև Հակ գիւղը, մի հարցի առիթ է դառնում. գոյութիւն ունի՞ արդեօք Հակու աւանի աւանդութիւնից որևէ մի հետք այդ միկնոյն վայրում—Հաքեարուի հովտում, թէ բնաւին այն ջնջուել է. այդ հարցի պատասխանը զբաղան է: Աղահէճքի և Հաքանդ գաւառի սահմանի վրայ այսօր զեռ ևս կանգուն են Պանդալեոնի և Զաքարիայի մատուռները: Հաքեարուի մէջ ձախ կողմից թափուող Միլխալա վտակը Քերսից սկիզբն առնելով՝ հոսում է գէպի հարաւ արևմուտք մի շարք բարձրութիւնների միջով, ուր և ոռոգում է Ղարաղշլաղ անունով հայ գիւղը: Համաձայն ճանապարհորդի, «Ղարաղշլաղ հայաբնակ գիւղի արևելեան կողմում բարձրացող բլրակի վրայ գտնուում է Պանդալէօն Բժշկի մատուռը, որ մեծ ուխտատեղի է: Սա մի հասարակ, բաւական մեծ մատուռ է, որի մէջ գտնուում է Պանդալէօն Բժշկի գերեզմանը: Սրա տապանաքարը սկզբում մի հասարակ կոճղ է եղել, բայց յետոյ Շուշեցի Թ. Թամիրեանի ծախքով քար է ձգուած: Այս մատրան մօտ գտնուում է մի ուրիշ, շատ փոքրիկ մատուռ ևս, որի մէջ նոյնպէս մի գերեզման կայ: Ոչ մի արձանագրութիւն չկայ, միայն ժողովուրդն ասում է, թէ այդ գերեզմանը «Շահգադինն» է: Ժողովուրդը Պանդալէօն Բժշկին պարոն Պիթ է կոչում և մեծ հաւատով վերաբերում (Ազգ. Հանդ. Դ. 49):

Այսպիսով Կաղանկատուացու յիշած աւանդութիւնը նոր հաստատութիւն է ստանում տեղագրական և կրօնական տուեալներով: Միկնոյն ժամանակ ակնյայտնի է դառնում, որ Կաղանկատուացու Հակուն իր զիրքով և սրբերի մատուռներով գտնուում է Աղահէճքում, ուր արդարև միջին դարերում գտնուում էին Հակ, իսկ այսօր АКЯРЛИ անունով գիւղերը: Այսպիսի միացման դէմ տարաձայնութիւնը միայն այն է, որ Կաղանկատուացին Հակու գիւղը յիշում է Աղուանքում, իսկ Ստեփ. Օրբէլեան Հակ յիշում է Սիւնեաց Աղահէճքում, բայց այս տարաձայնութիւնը հետևանք է միայն պատմիչների դարաշրջաններում հայոց կիսաանկախ իշխանութիւնների սահմանագծերի յաճախակի փոփոխութեան, որով միկնոյն գիւղը մերթ Աղուանից թագաւորութեան և մերթ Սիւնեաց մի որոշ գաւառի մէջ կարող էր յիշուել:

Կրօնական աւանդութեան առթիւ վերևում մենք զանց արինք յիշելու մի հարց, որը սյուսեղ լուծել չէր կարելի, այն է՝ թէ ինչու նահատակների նշխարները տարան և ամփոփեցին Հակու գիւղում և ոչ թէ նրանց նահատակութեան տեղում՝ այն է Զաքարիայի և Պանդալէօնի մատուռների մօտ: Այս հարցը իրայն տեղագրութեան պատկերով կարող է լուծուել: Բարտեղից երևում

է, որ Պանդալէօնի մատուռից մինչև Աղահէճքի ԱԿՅՐԱՆ մօտ 30 վերստ է, և այնուամենայնիւ այդ տարածութիւնը երկու հազարով պատկեր ունի: Բարեկուշատի վերին և միջին հոսանքները (Միսիանի ոստիկ. շրջան), ինչպէս և Գորիսի գետակի հովիտը մի շարք լեռներով ձգւում են դէպի արեւելք և խառնւում Հաքեարուի միջին հոսանքի հովտի հետ. այնպէս որ այդ մասում լեռնահովիտների մի անվերջ և խառնիխուռն խմբակցութիւն է ստեղծւում: Իսկ դրանից հիւսիս, Հաքեարուի վերին ջրաբաշխը, որ Մաղաւուն է կամ Աղահէճքը, մի շարք անանցանկի լեռներով կտրւած է հարաւից՝ Հաքանդից. այդպէս են՝ Վզըլ-Դաշ, Վաքիլ, Սարը Բարա, Լաչին, Հոչաւ (7500—6006 ոտն. ք.), Եալզզդադ, Ուրջան, Տեղ (5400—4500 ոտն. ք.): Այս լեռների հարաւային ստորոտով ձգւում է Մուղանից եկող ճանապարհը, որը Լաչին լեռան ստորոտում Հաքեարուի ափին սուր կտրուածքով խոնարհւում է դէպի հարաւ և Հաքեարուի հովտով դիմում է Արաքսի ափը: Այդպիսով ոչ Մուղանից, ոչ Գորիսից և ոչ էլ Պարսկաստանից ձգուող մեծ ճանապարհները չեն անցնում Լաչինից հիւսիս—Աղահէճք—Հաքանից և արեւմուտքից լեռներով իրեն բնական պարիսպով փակուելուց յետոյ, Հաքեարուի վերին ջրաբաշխը ևս առաւել ամուր լեռներով կտրուած է հիւսիսից և արեւելքից, ուր Արցախի լեռներն իրենց բարձրունքներով Աղուանից դաշտերի ծայրում պարիսպ են հանդիսանում: Աղահէճքի բնական ամրութեան համեմատ Միլխալա վտակի հովիտը, ուր գտնւում է Պանդալէօնի մատուռը, բոլորովին անպաշտպան էր. Պարսկաստանից Հաքեարուի հովտով դէպի հիւսիս բարձրացող ճանապարհի վրայ, 7—8 վերստ նրանից դէպի աջ, բաց շրջապատում այդ մատուռը որեւէ յարձակման առաջին իսկ հարուածը ընդունելու էր մատնուած, ինչպէս և, ըստ աւանդութեան, տեղի ունեցաւ ս. Գրիգորիոսի նահատակութիւնից յետոյ. թէ հեղեղեցիները աւերուեցին և թէ նրանց հրէցն ու իւր աշակերտը նահատակուեցին պարսիկների ձեռքով: Այդ դիրքի հետեանքն է անշուշտ նաև այն, որ նահատակների նշխարները տարան և ամփոփուեցին ամուր Աղահէճքում: Մեղ թւում է, որ Աղահէճքը իր այդ կիսաանառիկ և մեկուսացած դիրքի շնորհիւ է մեր պատմութեան էջերից բացակայում. ոչ մի յարձակման և ոչ մի հերոսական պաշտպանութեան հետ կապուած չէ հզել այդ գաւառը. սխալ է անշուշտ Ալիշանը, երբ այդ հրեոյթը վերագրում է նրան. թէ իբր «վաղ ուրեմն օտարացեալ էր ի բնիկ տէրանցն Սիւնեաց և անկեալ ընդ Աղուանից իշխանութեամբ» (Սիսական 266). Աղահէճքը նաև Աղուանից պատմութեան մէջ դեր չի խաղացել:

Հաքեարուի հովտի և Արմաւրի ազգազրական նիւթերից մի

քանիսը ևս, բացի նրանց տեղագրական պայմաններից, արժանի են ուշադրութեան, իբրև հարազատութիւն կամ իբրև միևնոյն կեանքի շարունակութիւնները երկու տարբեր վայրերում: Մեր ժողովրդի պահպանողականութեան հետքերը մենք ցոյց ենք տուել ուրիշ անգամներ, ինչպէս են էլլըրուսի բարձունքի վրայ Ուրուսի մահմեդական գիւղում հայոց «խաչի երդման» և ուրիշ մի շարք հայկական սովորութիւնների և տեքմիւնների գոյութիւնը: Արմաւիրոց թաղերի անունը անսպասելի կերպով մեկնուում է Հաքեարուի հովտի աղգարնակութեան կեանքով: Մաղաւուզը կամ Աղահէճքը գլխաւորութեամբ՝ պարսիկ, իսկ լեզուով՝ թաթար: Այդ անորոշ ծագումից առաջացած ժողովուրդը մի տարօրինակ սովորութիւն ունի. «Մէկ էլ տեսաք, գրում է ժողովողը, մի քանի ընտանիք, որոնց դուր չի գալիս իրենց գիւղը, թողնում են այն և գնում 20—30 քիլոմետր հեռու մի նոր գաղութ հիմնում և սկսում այնտեղ ապրել: Եւ երբ այդպիսի գաղութների բնակիչներին հարցնում էք թէ որտեղացի են, նրանք երբէք իրենց նոր գաղթատեղի անունը չեն տալիս, այլ այն հիմնական գիւղի, որտեղից գաղթել են (Ազգ. Հանդ. Դ. 57): Ահա Հաքեարուի այս միևնոյն սովորութեան նմուշն է Արմաւիրի Հաքուն թաղի անունը, որը սովորութեան հետ միասին փոխադրուած է լեռները: Իսկ Արմաւիրի միւս թաղերի անունները այդ միևնոյն սովորութեամբ սկիզբն են առնում Աղահէճքի և Հաքեարուի հովտի դրացի վայրերից, ուր նոյնանուն գիւղերը մինչև այժմ էլ գոյութիւն ունին. առաջին՝ Հատու Ղուայ թաղի անունը «ու» վերջանդամի անկմամբ և փոխարինմամբ ուրիշ երկու վերջաւորութեան մնացել է Սիւնիքի Հաթերք և Հադրութ անունների մէջ, որոնցից առաջինի վերջաւորութիւնը սովորական կրկնայոգնակին է, հմմտ. Կալեր, Պտեր (տես վերև), իսկ երկրորդի վերջանդամը նախնեաց «ոտուն է. Հիւրշման ոտտ համարում է պահլ. ԿՕԼ և հին պարսկ. rauta «գետ» բառը. այդպէս են Ճուաշոտտ, Աղուանդոտտ, Բաղանաոտ և Արանոտտ (Հանդ. Ամս. 1906, 85ա): Երկրորդ՝ Արմաւիրի միւս թաղը՝ Դեաւուր Հաքը՝ չը նայած որ այդ անունով շատ տեղեր կան այլևայլ գաւառներում, ունի իր կրկնակին Հաքեարուի միջին հովտում, Դորիսի գետակի ափին, Բարահունջ գիւղից դէպի հարաւ. այդտեղ «բարձրանում են երեք առանձին, հազարն ժայռեր, որոնցից մինի վրայ կայ մի հինաւուրց ամրոց: Այժմ ոչ մի ճանապարհ չը կայ նրա գլուխը բարձրանալու, միայն հեռուից երևում են բնականից թողնուած պարիսպ և այլեր: Ոմանք սրան Ղըզ-դալա են կոչում, ուրիշներն էլ՝ Դեաւուր դալա (Ազգ. Հանդ. Դ. 33): Երրորդ՝ Արմաւիրի չորրորդ թաղի անունը՝ Նջկըղուայ աւելի ընդարձակ ուշադրութեան արժանի է և նրա մասին

խօսք կը լինի ներքևում: Չորրորդ՝ Հաքում Հարլի վերջածայն «ճ» հնչիւնի կարևորութեան չափը անորոշ է, անունն ասւում է նաև առանց «ճ» ձայնի. իսկ յայտնի է, որ Սիւնիքը, Արցախը և Աղուանքը միայն ունին «ճ» վերջածայն ունեցող տեղւոյ անուններ, ինչպէս են՝ Աղահէճ: Գեգած, Դարահոճ, կամբէճ, Քարուէճ, այլ և արդի էրքաջ, Քարքանջ և այլն: Ծ վերջածայնի ներկայութիւնը ուրիշ տեղ՝ Բացի յիշածներից, յայտնի չէ. իսկ մարդկանց անունների վերջում նա երևում է զանազան ժամանակ, ինչպէս Արուճ, Ապուէճ, Մանէճ, Տարսայիճ և այլն:

Մեր հարցի համար պակաս նշանակութիւն չունի նաև երկու ժողովուրդների տոհմական յատկութիւններից մէկի նկարագիրը: Գեաւուր Ղալայից զէպի արևելք՝ Հաքեարուի միջին հովտում գտնւում է Խնձորեսկ գիւղը. որը գլխաւոր շնորհքը երգասացութիւնն է. «Խնձորեսկում կան բաւական աշուղներ, որոնցից նշանաւոր են Աշղ Մարտիրոսը, որի աշակերտն է Ղարա-Ղչլաղեցի Աշղ Հաթամը և Իւսուփ օղլին, որ գրել է «Հզարի քնարը»: Նշանաւոր է նաև Աշղ Ներսէսը՝ Սազանդարեան Թառսիւնի մականունանեալը, որ մօտ օրերս հրատարակեց իւր «Նոր երգարանը» (Ազգ. Հանդ. Դ. 36): Պէտք է աւելացնել, որ Խնձորեսկում միայն անհատները չեն երգի սիրահար. անխտիր ամբողջ Խնձորեսկի համար այդ կարելի է ասել. մինչև անգամ երգը միայն այդ գիւղն է արհեստ դարձրել, որի թէ՛ հարուստը և թէ՛ աղքատը սազը ուսին շրջում է մօտիկ և հեռաւոր գաւառները և հաւաք անում, առանց վիրաւորանք նկատելու այդ զբաղմունքի մէջ: Նրանք նոյնիսկ հեռաւոր Արէշի և Նուխու գաւառներն են անցնում, ուր մենք ևս լսել ենք նրանց Աշղ Ղարիբի, Շահիսմայիլի և Քեօրօղլուի երգասիրութիւնը: Ինչպէս Սիւնիքում Խնձորեսկը, նոյնպէս և Արմաւիրում Հաքում Հարլ և Եջեր Ղուայ թաղերն են յայտնի այնպիսի տոհմերով, որոնք երգի սիրահար են. նրանց երգերի նիւթը լինում է կամ մի սովորականից զուրս խելացի քայլ, կամ մի աւագակային արշաւանք և կամ որևէ պատկեր. հարուստ են երգերը տպաւորիչ պատկերներով և ոգևորիչ էֆֆեկտներով. խոր է զգացմունքը, երբ վիշտն է խօսում նրանց մէջ և անսահման է անհոգութիւնը, երբ ազատ զուարճասիրութիւնն է նրա զրդիչը:

Դաւով Հաքում Հարլոց երկրագործական զբաղմունքը յիշեցնող հեգնական դարձուածներին, նրանց անալօգիաները անհնար է գտնել թէ՛ Հեաքեարուի և թէ՛ ուրիշ հայարնակ գաւառում: Մասնաւորապէս Հեաքեարուի հովտում բնակիչների գլխաւոր և սիրելի զբաղմունքը հողի մշակութիւնն է. երկրագործութիւնը և այգեգործութիւնը, այլ և անասնապահութիւնը, և այդ

պատճառով հեգնութիւն չունին նրանք իրենց զբաղմունքի դէմ:

Այսպէս՝ ամփոփելով, ստանում ենք մեր ասածներից հետեւեալ երեք եզրակացութիւնը.

Նախ՝ Արմաւիրի Հաքում Հարլ, Հատու Ղուայ և Զաուր Հարլ թաղանոթները՝ իրրեւ նախկին բնակավայրից մնացած աւանդական յիշատակ, գտնւում են այսօր Հեաքեարու գետի հովտում, առաջինը Հեաքեարու գետի և ԱՅԱՔՐԱ գիւղի, երկրորդը՝ Հաթերք և Հադրութ գիւղերի և երրորդը Գեաւուր զաւայ աւերակի անուններով: Երկրորդ՝ Հեաքեարու գետի հովտում ապրող հայ և օտար ազգաբնակութիւնը մի կողմից և Արմաւիրի չեքեզախօս հայերը միւս կողմից մինչև այսօր էլ պահել են ազգագրական ընդհանուր առանձնայատուկ բնորոշումն, չը նայած որ նրանք թէ լեռնականներից և թէ Զանգեզուրի իսլամական արշաւանքներից բազմիցս այլասեռման շրջաններ են անցել: Երրորդ՝ Աղուանից Հակու աւանը և Աղահէճքի Հակ գիւղը Հեաքեարուի և նրա Միլխալա վտակի հովիտներում էին գտնւում. այդտեղ էր նաև Պանդալեոն բժշկի մատուռը:

2.

Արմաւիրի չորրորդ թաղը կոչւում է Եճեր Ղուայ կամ Եջեր ղուայ, որ նշանակում է Եճեր գիւղ կամ աւան. այս էլ մի անալոգիա է Հաքում Հարլի:

Յայտնի է, որ Եգեր ազգը բնակւում էր Վրաստանի և Սև ծովի մէջ տեղ, բայց Կաղանկատուացին Աղուանից պատմութեան մէջ յիշում է Աղուանքի մի գիւղը Հեջեր անունով: Թէպէտ Արմաւիրի Եճեր ղուայն դժուար է աւելնել թեան մէջ դնել Աղուանից Հեջեր գիւղի հետ, բայց հետաքրքիր և թերևս որևէ կերպ կարևոր նկատուի Հեջեր գիւղի Աղուանքից չքանալու հետեւեալ պատմութիւնը:

Եօթներորդ դարում «Աղուանից գլխաւորք ազգաշաղախ, աղծապիղծք եղեն, ասում է Մ. Կաղանկատուացին. նրանք «տարօրէն խառնակութեամբ» խնամութիւն արին իրար հետ. «զսոցա անօրէն ամուսնութիւնս երանելի հայրապետն Ուխտանէս անիծիւք փակեաց»: Այդ գլխաւորներից էր նաև «տունն Հեջերույ Կուր գետոյն յայնկոյս (Գ. 32): Թէ ինչ եղան այդ կրօնական բանադրեալները՝ պատմիչը պարզ չի գրում. «անդարձ լեալ ի գործեալ չարեացն՝ ամենեքին առհասարակ բնաջինջ եղեալ սատակեցան յերկրէ»:

Այստեղ չի ասուած թէ Հեջեր տունը գաղթեց, բայց ըստ երևութին այդպէս պէտք է հասկանալ, նախ՝ որովհետեւ որևէ

հրաշքով սպառուելու մասին չէ այդ տողերի մէջ խօսքը և երկրորդ՝ Ագաթանգեղոսի և Զենոբ Գլակի մէջ քրմական տների Կովկասեան լեռները գաղթելը և Լուսաւորչից գերծուելու դէպքերն էլ նոյնպիսի ոճով են արտայայտուած։ Ասուած է տուն և ոչ թէ գիւղ, որովհետեւ առաջինը ցեղական միտք ունի և նրա տակ մի քանի գիւղ կարող է հասկացուիլ, այնպէս որ՝ Եճեր առնմի անուն է և ոչ գիւղի։ Անորոշ է նաև Հեջերտան բնակատեղին, որ ըստ ոմանց անստոյգ ենթադրութեան՝ արդի Քիւրդամիր աւանի մօտ պէտք է որոնել։ Եւս առաւել անհաւանական է թէ գաղթի պատճառը ամուսնական կարգերի ոտնահարումը եղած լինի։ Աղուանքում ոչ միայն ազգաբնակութիւնը, այլ և՛ս առաւել անհամբերելին՝ հարձակնութիւնը մինչև անցեալ դարի վերջերը տեղում էր դեռ և երկու կին պահելու դէպքին մենք հանդիպել ենք Բարդա (Պարտաւ) գիւղից դէպի հիւսիս ընկնող հայ գիւղերից մէկում։ Իսկ թէ որքան արիւնախառնութիւնը և առհասարակ ընտանեկան բարքերը ընկած էին, դրան վկայ է Գարաբաղի Կոնսիստորիայում պահուող Մետրապօլիտի կոչուած Արխիւը 1837—1850 շրջանի վերաբերեալ, որը անձամբ բնագրում կարգալու առիթ ենք ունեցել մենք։ Ուստի թւում է թէ՛ ինչպէս Կուրից «յայսկոյս» գոյութիւն ունէին հակակեղեցական բարքերը, նոյնպէս և հիւսիսում՝ Կուրից «յայսկոյս» ևս նրանք կարող էին գոյութիւն ունենալ, առանց գաղթի պատճառ դառնալու։

Սակայն ազգաղբաղական նիւթերը ցոյց են տալիս, որ լեռներում բազմաթիւ աւանդութիւններ են տարածուած արիւնախառնութեան և ամուսնական-ընտանեկան կեանքի պղծութեան դէմ։ Այդ աւանդութիւնների յանցագործ հերոսները միշտ պատիժ են ստանում, իսկ պատիժը քարանալն է, քարանում է թէ՛ անհաւատարիմ կիներ և թէ՛ իրար հետ ամուսնացող քոյր ու եղբայրը։ Այս աւանդութիւնները, որոնք թէ՛ մահմեդական և թէ՛ քրիստոնեայ լեռնականների մէջ անխտիր տարածուած են, անշուշտ նրանց սօցիալական կեանքի արտայայտութիւնն են և արձագանք են հանդիսանում տիրող կարգերի։ Իսկ կարգերն իբրև երևոյթ՝ բացատրւում են կնոջ իրաւական և հասարակական յայտնի վիճակով։ Այդ պատճառով Աղուանքի և Սիւնիքի նման կարգերը տեսնելով, չենք կարող անպատճառ մի գաղթականութեան իբրև հաղորդիչ տարրի ներկայութիւնը ժնտրել և նոյնիսկ երկու դրացի ժողովուրդների փոխադարձ ազդեցութեան հետեանքը համարել նման կարգերը։ Թէպէտև տեսնելով լեռներում ապրող ժողովուրդների խիստ պահպանողական ոգին, կարող ենք յուսալ, որ ազգագրական նիւթերի հարստանալով՝ հնարաւորութիւն կստեղծուի Արմաւիրի Եճեր դուռի և Աղուանքի Հեջերտոյ տան առընչութեան

աստիճանը և չափը կռահելու որևէ կերպ¹⁾։

Է.

Պատմական գրաւոր յիշատակարանների ցուցումները Աղահէճքի և Հակուի մասին, որոնք տեսանք նախորդ գլխի մէջ, բացի որոշ տեղագրական և ազգագրական նշանակութիւն ունենալուց, մատնացոյց են անում այլ ևս մեծ գաղթի գոյութիւն։ Աղահէճը գրացի էր Եղեգիբ և Հաբանդ գաւառներին, Տաթևին և Հալիձորին, որտեղից մի շարք միջնադարեան հայ գիւղեր ջնջուել են և նրանց անունները մնացել են երկու տարրեր տեղ և տարրեր ձևով ու բաղդով. Վէդի, Ակոշ, Հալիձոր, Վարանդա, Աղթա, Արփա և այլն գիւղերի անունները, որոնց մեծ մասը միայն Ալիշանի «Սիսականի և Զալալեանի» ճանապարհորդութեան մէջ ժողովուած արձանագրութիւններից են մեզ յայտնի, այսօր գտնուում են Կովկասեան լեռներում Վէդէն, Ակուշ, Ալաջիւր, Վարանդա, Ախտը,

1) Ազգագրական նիւթերի հարստութեան, բացի Արմաւիրից, կարիք տւելի նաեւ Զանգեզուրի շրջանը։ Ճիշտ է՝ վերջինիս տնտեսական որութեան, առողջապահութեան, վիճակագրութեան եւ հիւսիստնութեան մասին մի բանի դրարար եւ ոտուկէն լեզուներով աշխատութիւններ կան, որոնցից եւ բաղել է Ե. Աւարեանը իր տեղեկութիւնների մեծ մասը, բայց ժէ մի անձն դեռ եւս չի ժողովել այն նիւթերը, որոնք արգիւնք են հայ, բուրգ եւ թաթար ցեղերի կուլտուրների փոխադարձ ազդեցութեան։ Իսկ մէկից անկիւ տեղեկութիւններ լւծինք, որ այդպիսի ազդեցութիւն տեղի է ունեցել. այդ են ցոյց տալիս այն բազմաթիւ գուռ մահմետական գիւղերը, որոնց մէջ գտնուում են այսօր իսկ հայոց եկեղեցիների տներակները, այդպէս են՝ Զիչիմի, Հերիկ, Մերիկ, Բայենդուր, Հոչաս, Փշանիւ, Զրախու, Վաառու, Մունասար, Արդդաճի, Ալիզուլի Աւշադ, Յետոյ՝ սրանց բնակիչները դեռնին խաչ բաշխու եւ «Էրմանըն խաչի օրում» բաւերով երգուելու սովորութիւն ունին, իսկ այդ միեւնոյն երգումը Էնչե անունով գտնուում է էլբրանի լանջի 5,000 ոտն. բարձ. վրայ Աւրասպի մահմեդական գիւղում (տես մեր «Լեռնականք» Ա. Ուրաբի—«խաչի երգումն»)։

Այսպիսի կուլտուրական ազդեցութեան նմուշների շարքը կարելի է դեռ աւելի ընդարձակել, նկատելու համար, թէ մ'ըբան կարելու է շրջեմ մահմեդական ազգաբնակչութեան մէջ, ամբել նրանց շրջանում եւ գրի առնել մասնաւորապէս այն նիւթերը, որոնք զենցադական եւ կրօնական կեանքը եւ սովորութեան իրաւունքն են պատկերացնում ճանապարհորդներն ու ազգագրորդները մինչեւ այժմ այդ նպատակին չեն ծառայել, իսկ Զանգեզուրի շրջանի ուսուցիչներն ու ինտելիգենտները անուշադիր են թողել այդ կարեւոր խնդիրը։

Ալփա և ալֆն ձևերով, հայութիւնից օտարացած և մահմեդակա-
նութեան զոհը դարձած ազգարնակութեամբ Բացի այդ, դրանց
կից լեռներում ամբողջ հասարակութիւններ կան, որոնք իրենց
համարում են սերուած հայոց ազգից, ինչպէս են՝ Թագաւորեան
կոչուող—Тагаурское—օսական իշխանագն Ալդար ցեղը, Չոխ և
Յագախար գիւղերը և ալֆն, Դրանց ընդհանուր գաղթը մենք յի-
շել ենք մեր «Լեռնականք Բ. Թագաւորեան Հասարակութիւն» աշ-
խատութեան 57—65 էջ, ուր և բացատրուած է գաղթի հաւանա-
կան պատճառը, այն է՝ Թաթարական և Վրացական շահերի բա-
խումը 13-րդ դարում: Այդ էջերի միտքը այս է: Յայտնի է Սիւ-
նեաց Պատմիչի յիշատակարանից, որ Թաթարների տիրապետու-
թեան դէմ դժգոհութիւնն սկզբում ծագեց Նախիջևանի շրջակայ-
քում, և ապա տարածուելով մինչև Կուր, նրան մասնակից դար-
ձան Սիւնեաց գլխաւոր վանքերն իրենց գիւղերով և կալուածնե-
րով: Տաթար բռնեց վրացական, իսկ Նորավանքը՝ Թաթարական
տիրապետութեան և շահերի կողմը. այդպէս և գիւղերը, որոնք
պատկանում էին այդ վանքերին: Սովորաբար նման դէպքերում
տէրերն իրենց ծառաներով և ժողովրդով տեղափոխուում էին, երբ
հակառակ կուսակցութեան դիմադրել ալ ևս անհնար էր դառնում,
մի սովորութիւն, որը նկատելի է հին ժամանակներից սկսած
մինչև 19-րդ դարի սկիզբները. այդ վերջին շրջանում, օր. հայ
մելիքները Ղարաբաղից տեղափոխուեցին Վրաստան վառ յոյսե-
րով, որին և զոհ գնաց նրանց հողերն ու կալուածքները, իսկ
նրանց ժողովուրդը ցրուեց Բորչալուում: Միջին դարերում այդ-
պիսի գաղթերի ժամանակ բարեպաշտութիւնը թելադրում էր վան-
քերին ընծայել բարձի երեսի թողնուած գիւղերի հողերը, ջրա-
ղացը, այգին, ջուրը և ալֆն:

Լեռներում այսօր իր գոյութիւնը քաշող Ակոշ հասարակու-
թեան և գիւղի անունը, ահա, այդպիսի կալուածական նուիրա-
բերութեան շնորհիւ մնացել է մի արձանագրութեան մէջ, որի
իմաստը զուգորդում է Թաթարասիրական կուսակցութեան հա-
կուած կալուածատէր քահանայի այն պատմութեան հետ, որը ա-
նում է Սիւնեաց պատմիչը, և որը մեր աշխատութեան յիշած
էջերում համառօտուած է: Նման ընծայարբերութիւն, բացի Ակոշի
հողերից, յիշուած է նաև Հալէցոց և Արփայեցոց այգիների և հո-
ղերի արձանագրութիւնների մէջ:

Ահա այսպիսի գաղթի և զրութեան ժամանակ Աղահէճքի
ազգարնակութեան և նրա Հակու գիւղի մասին լուծիւն է պա-
հուած. Աղահէճքի, որի հարաւային սահմանը քերելով անցնում է
այն ճանապարհը, որը Ակոշեցոց, Հալէցոց, Վէդէցոց և ալֆն ա-
ռաջնորդել է դէպի Աղուանից դաշտը և այնտեղից հիւսիս: Հակ

գիւղը յայտնի է, որ Թաթարական կուսակցութեան հակուած Նորավանքի կալուածքն էր. չենք կարծում, որ իրենէ քրիստոնէամուլ և այսօր իսկ լեռներում Լուսաւորչեան հաւատի ու խաչի Փանատիկ պաշտպան հանդիսացած Հաքուեցիք հաշտուէին ասիական հրոսի և կիսալուսնի տիրապետութեան հետ և հենց առաջին օրինակը իրենք չը հանդիսանային գաղթի: Դժբաղդաբար Սիւնեաց Պատմիչը, որ՝ իբրև Նորավանքի առաջնորդը յայտնի էր ոչ միայն Թաթարասիրութեամբ, այլ և մի համբերատար պօլիտիկոսութեամբ վրացասէր Տաթևացոց վերաբերեալ խնդիրներում,— և այդ ինքը յիշում է՝ իր գործելակերպը քրիստոնէական խաղաղասիրութեան տակ պարուրելով (Տես մեր Լեռնականք Բ. «Գաղթ», դժբաղդաբար, ասում ենք, Սիւնեաց Պատմիչը Հակուի մասին, և առհասարակ գաղութների մասին ոչինչ չի յիշում, բացի՝ որ Հակ Նորավանքի կալուածքն է: Այդ վերջին տեղեկութիւնը 1280 թուականի շրջանից է և վերաբերում է այն ցուցակին, որով վանքը տուրք էր ստանում իր գիւղերից հին կտակների և սովորութեան ուժով:

Ինչ որ հայոց յիշատակարանները թելադրում են ասելու Հակու աւանի գաղթի մասին՝ այս է բոլորը, որից շատ բան ենթադրական է, նորանոր ստուգութեան և լուսաբանութեան կարօտ և թերևս խալառ դատապարտուած անորոշութեան և անյայտութեան: Ասում ենք՝ անյայտութեան, որովհետև 18-րդ դարում տեղի ունեցած իսլամական հեղեղի զոհ են գնացել այն աւանդութիւններն ու հնութեան հետքերը, որոնք կարող էին շատ բան ստուգել և թերին լրացնել: Իրենք այսօրուայ մահմեդականացած լեռնականները վերոյիշեալ պարագան և իրենց կրօնի այդպիսի բացասական դերը շատ լաւ գիտեն և իրենց ժողովրդական նիւթերի մէջ դեռ պահում են այնպիսի լեգենդաներ, որոնք վկայում են հայերի հալածանքի, ճնշման և նուազման իրողութիւնը: Հայոց և լեռնցոց յարաբերութեան մասին պատմող այդ կարգի նիւթերից մէկը յիշելով կը փակենք մեր այս յօդուածը:

Ճորայ Պահակի մօտ, վատնեան Դաշտում, կարբուլաղ գիւղից ոչ հեռու, ծովի ափին ձգուող ճանապարհի վրայ մի քարէ մարդակերպ հիւսուածք կայ, որը տեղացի մահմեդականները անուանում են Էրմանի-Բուլաղ և նրա մասին պատմում են հետեւեալ լեգենդան. մի անգամ այդտեղ մահմեդականութեան մոլեռանդ ջատագովները պատահելով մի ձիաւոր հայի անցնելիս, յարձակուել են վրան, որ սպանեն, իսկ հայը տեսնելով, որ փրկուելու չէր կայ թշնամիների ձեռքից, կանչել է իր Աստուծուն և

խնդրել, որ իրեն մահմետականների ձեռքը չը տայ, այլ քար դարձնէ իրեն և փրկէ նրանցից. ով հրաշք, իսկոյն հայը և իւր ձին տեղնուտեղը քարացել են և այն օրից մինչև այսօր այդ քարէ հիւսուածքը կոչոււմ է Էրմանի-Բուլաղ (Сбор. Матер. для опис. М. и Пл. Кавказа т. II, отд. II, 140): Հետաքրքիր է թէ ինչ իմաստ ունի այս խորհրդաւոր աւանդութիւնը. քարանալը լեռնական ժողովուրդների աւանդութիւնների մէջ հանդիսանում է սովորաբար իրրեւ պատիժ, երբ մէկը օրէնքի դէմ է գնում. այսպէս՝ քարանում է հօր դէմ ըմբոստացող զաւակը, Աստուծոյ դէմ մեղանշող անձը, տօն օրը աշխատողը, հիւրասիրութեան կարգը ռտնահարողը և այլն: Այս կարգի աւանդութիւնների և Էրմանի-Բուլաղի լեզենդայի մէջ տարբերութիւնը այն է, որ առաջինների մէջ հերոսների քարանալը պատիժ է հանդիսանում նրանց համար, իսկ հայը կամաւոր ցանկութեամբ է քարանում: Իսկ ըստ էութեան բոլոր դէպքերում—լինի քարանալը ակամայ թէ կամաւոր կերպով—այդ ելքը գտնում են հերոսները, երբ ըմբոստանում են նրանք ըէժիմի, օրէնքի կամ հասարակական կարգի դէմ: Աւանդութիւնների մէջ քարանալու այդպիսի բնոյթը վերաբերում է նաև Էրմանի-Բուլաղի արձանին, այսինքն՝ մահմետական ժողովուրդը, որը թերեւս նախկին քրիստոնէութիւնից շրջուելով մահիկի պաշտպանութեան, ականատես էր լինում իր այն եղբայրակիցներին, որոնք յամառում էին քրիստոնէութեան մէջ և զոհւում,—այդ մահմեդական ժողովուրդը իր հասկացողութեամբ է պատմում ըմբոստացող հայերի վախճանը և իր լեզենդաների բնոյթով է արձանագրում կրօնական հալածանքի պատմական ֆակտը: Եւ արդարեւ պատմութիւնից յայտնի է, որ Յուստիանոս Մեծից սկսած լեռներում բիւզանդական եկեղեցական թեմեր կային, որոնց եկեղեցիների բազմաթիւ աւերակները դեռ նկատւում էին 19-րդ դարի սկզբում, յետոյ՝ ձենովացոց վաճառականութեան շնորհիւ Սև ծովի ափերին քրիստոնեայ գաղութներ էին հաստատուել: Իսկ վրացիները և հրէաները ապրում էին լեռներում իրրեւ բնիկներ քրիստոնէութեան 5-րդ դարից սկսած: Սոքա բոլորը 18-րդ դարում մահուան երկիւղի տակ մահմետականութիւն ընդունեցին և այսօր էլ աւանդաբար իրենք լեռնականները զիտեն, թէ որ գիւղը որ ազգից է սերուած և որ կրօնից է դաւանափոխ եղած: Գալով հայերին նրանք լեռնացոց հետ յարաբերութիւն են ունեցել քրիստոնէութեան Դ. դարից իսկ, և Աղուանից կաթողիկոսութեան միջնորդութեամբ եպիսկոպոսութիւն է ստեղծուել քրիստոնեայ ցեղերի համար: Բնիկ հայերն էլ սկսել են տարածուել դէպի հիւսիս ասիական արշաւանքների ժամանակ, այնպէս որ 18-րդ դարում, ի թիւս միւս քրիստոնեայ ազգերի՝

հաճ հայ գաղթականները ենթարկուած էին ինչպէս Շաքուայ շրջանում՝ նոյնպէս և աւելի հիւսիս լեռներում մահմեդական մուլաների հալածանքին. աւանդութեան բաւարանով քարացել են, այսինքն՝ կոտորուել ջնջուել են հայերը, եթէ իսլամութեան հա-կառակելով յամառել են իրենց կրօնի մէջ և առիթն են հանդի-սացել այն բնորոշիչ լեզենդայի, որը յիշեցինք վերևում և որի նիւթը հէնց Դ. դարից է ծայր առնում Ադուանից առաջին հայ միսիոնարի՝ ս. Գրիգորիոսի նահատակութեամբ: Այդ բոլորը մա-նաւանդ իմանալուց յետոյ աւելի հետաքրքիր է դառնում այն հարցը, թէ ինչ հրաշքով իսլամից գերծ են կարողացել մնալ միայն Հակոբեցիք՝ յանձին Արմաւրի Հաքում-Հարլցոց, և միւս տոհմերը, որոնք՝ խոստովանենք սակայն, ոչնչով չեն տարբերւում կարա-դայի չերքեզներից, — ոչ միայն արտաքին դիմագծերով, հագուս-տով, կերակրով, և ժողովրդական երգերով, այլ մինչև անգամ հոգով և ունակութեան տեսակով ու չափով: Այն, հետաքրքիր է այդ հարցը և հունձք բազումք են, այլ դժբաղդաբար՝ մշակք սակաւք:

Դր. Տէր Պօղոսեան:

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ

Հայերէն ձեռագրերը

(Համառօտ նկարագրութիւն եւ յիշատակարաններ)

Շարունակութիւն *)

Թ. 34. **)

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն.

(Թղթ. հօսք. քւկ. գրչ. Թ. ձ. ԾԵ.)

393բ. Յիշատակարան. գրոյս:

Փառք ամենաս*ը երրորդութ*ըն եղական և միա*ծութ*ըն. հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, որ ետ կարողութիւն, նուաստ և փանաքի անձինս ոհանէսի: ամենից նուաստ պաշտօնէի: կարգաւ աւագ սարկաւագի: և որ զգալութ*ս ուսեալ եմ առ ոտս: տ*ը պողոս դափանեցի. որ և ի գիւղն տանձավերու. ա*ծ ողորմի զիմ տ*ըն հոգու: որ ի վաղեմից ժամ*նակ*ց. ցանկացող եղէ. յայսմ,

*) Տես Արարատ, 1914, դիկտեմբեր:

**) Նախընթաց ձեռագրի համարը «Արարատ»ի յունուարի №-ում սխալմամբ տպուած է 54 փոխ. 55-ի: